ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան 10-րդ փողոցը (սկսվում է Սիլիկյան 1-ին փողոցի հատման տարածքից և հասնում մինչև Սիլիկյան 7-րդ փողոցի հատման տարածք) անվանակոչել հայ եկեղեցական, մշակութային, պետական գործիչ, Ամենայն Հայոց 10-րդ կաթողիկոս Սահակ Պարթևի անվամբ՝ «Սահակ Պարթևի փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ **ՔՐԻՍՏԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՄԻՔԱՅԵԼ ՄԱՆՐԻԿՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ **ՎԱՉԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ եկեղեցական, մշակութային, պետական գործիչ, Ամենայն Հայոց 10-րդ կաթողիկոս Սահակ Պարթևը ծնվել է 348թ. սեպտեմբերի 29-ին Կեսարիայում: Հայտնի է նաև Մեծն Սահակ, Իսահակ Պարթև, Սուրբ Սահակ անուններով: Եղել է Ներսես Ա Մեծ Պարթևի և Տարոնի իշխան Վարդան Մամիկոնյանի դուստր Սահանդուխտի որդին: Մոր վաղաժամ մահից և հոր՝ Բյուզանդիա ուսման մեկնելուց (350թ.) հետո, Տարոնում մանկանը խնամել ու կրթել է պապը՝ Վարդան Մամիկոնյանը: Հոր աթոռակալման ժամանակ երկար տարիներ ուսանել է Կեսարիայի, Ալեքսանդրիայի և Կոստանդնուպոլսի հռչակավոր ուսումնարաններում: Եղել է քաջահմուտ հայկաբան և հունաբան, տիրապետել նաև ասորերեն և պարսկերեն լեզուներին: Ձեռնադրվելով եպիսկոպոս՝ իր 60 աշակերտների հետ կրոնավորել է Վաղարշապատի Սբ. Էջմիածին վանքում: Կաթողիկոս ընտրվելուց հետո աջակցել է Հայոց Խոսրով Գ թագավորին, որը ջանում էր վերամիավորել հայկական հողերը և վերականգնել Մեծ Հայքի միասնականությունը: Սասանյան արքունիքը 389թ. Խոսրով Գ-ին բանտարկել է Անհուշ բերդում, իսկ Պարթևի հայրապետությունը համարել անվավեր: Հայոց նոր թագավոր Վռամշապուհի աջակցությամբ վերահաստատվել է իր աթոռին: Պարթևի միջնորդությամբ Պարսից արքա Վռամ 3-րդ Կրմանը վավերացրել է հայ նախարարությունների Գահնամակը, Մամիկոնյաններին շնորհել 5-րդ պատվավոր գահը, Պարթևի փեսային՝ Համազասպ Մամիկոնյանին, ճանաչել Հայոց սպարապետ, ներում շնորհել Ամատունիներին ու Կամսարականներին: Այնուհետև, շուրջ քառորդ դար տևած խաղաղ պայմաններում Պարթևը ծավալել է մշակութային գործունեություն, Մեսրոպ Մաշտոցի սերտ համագործակցությամբ, Վռամշապուհ թագավորի և Առավան Հազարապետի հովանավորությամբ խթանել է ազգային կրթության ու լուսավորության նոր վերելքը: Հայոց նոր գրերի ստեղծումից (405-406թթ) հետո նրա հրամանով արգելվել են օտար լեզուներով ու գրություններով ուսուցումները, և ամենուրեք կրթությունն սկսվել է հայերենով: Նրա 60 և Մեսրոպ Մաշտոցի 40 աշակերտները, որոնց անվանում են նաև վերծանողներ ու թարգմանիչներ, սկսել են ուսուցանել հայոց նոր (Մաշտոցյան) գրերը, ասորերեն և

հունարեն լեզուներից թարգմանել աստվածաբանական, իմաստասիրական, պատմական և այլ գրքեր: Վռամշապուհի մահից (414թ.) հետո նրա միջնորդությամբ Պարսից Հազկերտ 1-ին արքան բանտարկությունից ազատել և Հայոց թագավոր է ճանաչել ծերացած ու հիվանդ Խոսրով Գ-ին, որը շուտով վախճանվել է՝ հազիվ մեկ տարի գահակալելով: Վերջինիս հաջորդած Շապուհ Պարսիկի մահից (419թ.) հետո Պարթևի ջանքերով 422թ.-ից Հայոց թագավոր է ճանաչվել Վռամշապուհի 18-ամյա որդի Արտաշես Գ-ն, որն 8 տարի գտնվում էր նրա խնամակալության ներքո: Պարթևն աշխույժ գործունեություն է ծավալել նաև Հայաստանի բյուզանդական մասում: Հատուկ պատգամավորությամբ (Մեսրոպ Մաշտոց, Դերջանի Գնիթ եպիսկոպոս, Համազասպի որդի Վարդան Մամիկոնյան) 417թ. դիմել է կայսերը և Կոստանդնուպոլսի պատրիարք Ատտիկոսին՝ Հայոց կաթողիկոսության հոգևոր իշխանությունը ինչպես նաև իր թոռ Վարդան Մամիկոնյանին Հայոց սպարապետ ճանաչելու խնդրանքով: Հայաստանում ազդեցությունը ամրապնդելու և հայերի թշնամանքը չգրգռելու համար բյուզանդական արքունիքը բավարարել է կաթողիկոսի խնդրանքը: Պարսից Վռամ 5-րդ արքան, քաղաքական մեղադրանքներ հարուցելով նրա և Արտաշես Գ-ի դեմ՝ 428թ. նրանց հրավիրել է Տիզբոն և ձերբակալել: Սակայն հայերի դժգոհությունները մեղմելու համար Վռամ 5-րդը 432թ. աքսորից ազատել է Պարթևին՝ նրան վերապահելով Մեծ դատավորության պաշտոնը, եկեղեցական տուրքերի տնօրինությունը և ձեռնադրության իրավունքը, պայմանով, որ նա իր հեղինակությամբ գործակցի Հայոց մարզպանին՝ պարսիկ Վեհմիրշապուհին: Կաթողիկոսը թողել է գրական հարուստ ժառանգություն: Ազգային ավանդույթների ու սովորույթների հիման վրա Մեսրոպ Մաշտոցի հետ կազմել է Մաշտոց կոչվող ծեսերի ու օրհնությունների գիրքը, կարգավորել է հայկական տոնացույցը, գրել է եկեղեցական ու աշխարհիկ դասերին, պաշտոնյաներին, հայ ընտանիքին, ամուսնությանը և այլ հարցերին վերաբերող բազմաթիվ կանոններ, գրել և եղանակավորել է շարականներ, պատարագամատույց, ծիսական աղոթքներ, հատկապես վճռական դեր է խաղացել հունական Աստվածաշնչի թարգմանության և կանոնացման գործում: Ղազար Փարպեցին գրում է, որ Մեսրոպ Մաշտոցը և մյուս թարգմանիչները հայերեն և հունարեն հնչյունաբանությունը համեմատելիս հաճախակի դիմել են Պարթևին, որովհետև նա խիստ առլեցուն էր անցկացրել ուսումը բազում հույն գիտնականների մոտ, կատարելապես տիրապետել է տառերի հնչյունաբանությանն ու հռետորական մեկնաբանությանը, քաջատեղյակ՝ փիլիսոփայության

ճարտասանություններին: Նրա անունով պահպանվել են հայ եկեղեցու և տիրող դասակարգի շահերից ելնող դավանաբանական թղթեր՝ ընդդեմ նեստորականության, բորբորիտներ ու մծղնեականներ կոչվող աղանդավորների, ինչպես նաև նամակներ՝ ուղղված Թեոդոսիոս 2-րդ կայսերը, Անատոլիոս կուսակալին, Պրոկղոս պատրիարքին, Ատտիկոս, Ակակիոս եպիսկոպոսներին:

439թ., երբ Պարսից արքա Հազկերտ 2-րդը պատերազմ է հայտարարել Բյուզանդիային՝ ռազմաբեմ դարձնելով Հայաստանն ու Հայոց Միջագետքը, Պարթևն ընդառաջ ելնելով, փորձել է կանխել արյունահեղությունը, բայց վախճանվել է ճանապարհին՝ Բագրևանդ գավառի Բլուր գյուղում: Նրա դին փոխադրվել է Տարոն և ամփոփվել Աշտիշատում: Հայոց եկեղեցին Սահակ Պարթևին դասել է սրբերի կարգը՝ նրա հիշատակի օրը մտցրել հայկական տոնացույցում և սահմանել է «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան 10-րդ փողոցը (սկսվում է Սիլիկյան 1-ին փողոցի հատման տարածքից և հասնում մինչև Սիլիկյան 7-րդ փողոցի հատման տարածք) անվանակոչել հայ եկեղեցական, մշակութային, պետական գործիչ, Ամենայն Հայոց 10-րդ կաթողիկոս Սահակ Պարթևի անվամբ՝ «Սահակ Պարթևի փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ **ՔՐԻՍՏԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՄԻՔԱՅԵԼ ՄԱՆՐԻԿՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ **ՎԱՉԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Սահակ Պարթևի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Սահակ Պարթևի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ **ՔՐԻՍՏԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՄԻՔԱՅԵԼ ՄԱՆՐԻԿՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ **ՎԱՉԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**